ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀայաստանիՀանրապետության Արմավիրիմարզի Մեծամորհամայնք,
ՀՀ, Արմավիրիմարզ, ք.Մեծամոր, Հեռ. (0237)34441 ,
metsamormeria@yandex.ru

N 02
08 հունվարի 2021թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ՝
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Հարգարժան Պարոն Մաթևոսյան.

Ձեզ եմ ներկայացնում Մեծամոր համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 8 հերթական նիստի որոշումները:

Առդիր էլ. նյութ

Համայնքի ղեկավար՝ Ռ.Գրիգորյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, (0237)34441 metsamormeria@yandex.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 դեկտեմբերի 2020 թվականի N 28 -Ա

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի վեցերորդ մասով, համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. *Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 8 հերթական նիստի օրակարգը համաձայն հավելվածի:*
2. *Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :*

կողմ- 9 *դեմ-* 0 *ձեռնպահ-* 0

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
ԳԱԼՈՅԱՆ ՖԵԼԻՔՍ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՅԿ
ՂՈՒԼԻՋԱՆՅԱՆ ՄԱՍԻՍ
ՄԿՐՏՉՅԱՆ ԱՇՈՏ
ՄԱՒԼՅԱՆ ԿՈԼՅԱ
ՄԿՐՏՉՅԱՆ ՄՀԵՐ

Համայնքի ղեկավար՝ *ՌՈԲԵՐՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ*

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Մեծամոր համայնքի ավագանու
2020 թվականի դեկտեմբերի 28 -ի
N 28 -Ա որոշման

Ο Ր Ա Կ Ա Ր Գ

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 50-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻ, ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

2021 ԹՎԱԿԱՆԻՆ «ՄԵԾԱՄՈՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀՈԱԿ-Ի ՊՅԱՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2021 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ, ՄԵԾԱՄՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 դեկտեմբերի 2020 թվականի N 29-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ և 10-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության 2020 թվականի դեկտեմբերի 16-ի պետական փորձագիտական եզրակացությունը, ինչպես նաև համայնքի ղեկավարի առաջարկությունը համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի վարչական տարածքում 2021 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

կողմ-9 դեմ-0 ձեռնպահ-0

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ

ԳԱԼՈՅԱՆ ՖԵԼԻՔՍ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՅԿ

ՂՈՒԼԻՋԱՆՅԱՆ ՄԱՍԻՍ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՇՈՏ

ՄԱՀԼՅԱՆ ԿՈԼՅԱ

ՄԿՐՏՉՅԱՆ ՄՀԵՐ

Համայնքի ղեկավար՝ Ռոբերտ Գրիգորյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Մեծամոր համայնքի ավագանու
2020 թվականի դեկտեմբերի 28-ի
N 29 -Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,

բ. սույն կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար դրամ,
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ,
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ,
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հարյուր հազար դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեք հազար դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հինգ հազար դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ երեք հազար դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ հինգ հազար դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ վաթսուն հազար դրամ.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար դրամ,

- 26-ից սրսչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնմեկ հազար դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնհինգ հազար դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսաներկու հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝քառասուն հազար դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ութսուն հազար դրամ.

բ. օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնմեկ հազար դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնհինգ հազար դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսաներկու հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասուն հազար դրամ.

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ութսուն հազար դրամ.

9) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում ,Առևտրի և ծառայությունների մասինե Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

10) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ,
բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ հարյուր հազար դրամ,
գ. բաղնիքների (սաունաների) համար՝ չորս հարյուր հազար դրամ,
դ. խաղատների համար՝ մեկ միլիոն դրամ,
ե. շահումով խաղերի համար՝ չորս հարյուր հազար դրամ,
զ. վիճակախաղերի համար՝ հարյուր հիսուն հազար դրամ.

11) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝
ա. հիմնական շինությունների ներսում՝
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հազար մեկ դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ յոթ հազար դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնմեկ հազար դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնվեց հազար դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսանմեկ հազար դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեսուն հազար դրամ.
բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ութ հազար դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսանհինգ հազար դրամ.

12) ավագանու որոշմամբ սահմանված տնային կենդանիներ պահելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հինգ հազար դրամ.

13) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝
ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ,
բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար հինգ հարյուր դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

14) Մեծամոր համայնքի խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.

15) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ տասը հազար դրամ.

16) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հինգ հարյուր հազար դրամ.

17) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն դրամ,

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ յոթ միլիոն դրամ,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ տասը միլիոն դրամ.

18) համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար հիսուն հազար դրամ.

19) համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար՝

ա. կարաոկեի, դիսկոտեկի, բաղնիքի, սաունայի և շոգեբաղնիքի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում քսան հազար ՀՀ դրամ,

բ. հեստապարային ակումբի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում երեք հարյուր հազար ՀՀ դրամ.

2 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.

1. Մեծամոր համայնքնում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ յոթ հազար դրամ.

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ յոթ հազար դրամ..

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ յոթ հազար դրամ..

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ տաս հազար դրամ.

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ տաս հազար դրամ.

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար դրամ.

7) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը համայնքի ավագանին սահմանում է ,Աղբահանության և սանիտարական մաքրման մասինե Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում.

8) Բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար աղբահանության վճարը սահմանվում է՝

8. 1) ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական երկու հարյուր Հայաստանի Հանրապետության դրամ,

9). Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.

9. 1) առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ յոթանասուն Հայաստանի Հանրապետության դրամ.

9. 2) հյուրանոցային տնտեսության օբյեկտների, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների (ավտոկայանների, օդանավակայանների, երկաթուղային կայարանների), հանգստյան տների, բազաների ու ճամբարների, սպորտի համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ քառասուն Հայաստանի Հանրապետության դրամ.

9. 3) վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ տասնյոթ Հայաստանի Հանրապետության դրամ.

9. 4) գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ երեքից մինչև տասնհինգ Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ զորանոցների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ ութ Հայաստանի Հանրապետության դրամ.

9. 5) արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների մասով (այդ թվում՝ ավտոկայանատեղի)՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հինգ Հայաստանի Հանրապետության դրամ.

10) շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարը հաշվարկվում է յուրաքանչյուր հատվածի համար՝ ըստ տվյալ հատվածում իրականացվող գործունեության տեսակի, համաձայն սույն կետի 9. 1-9. 5-րդ ենթակետերով սահմանված դրույքաչափերի, եթե աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին գրավոր տեղեկացնում է համայնքի ղեկավարին՝ կցելով նշված հատվածների մակերեսների նշումով սխեման, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է սույն մասի 9. 1-9. 5-րդ կետերով սահմանված դրույքաչափով.

11) շինություններում (այդ թվում՝ առանձնացված տնտեսական գործունեության համար նախատեսված շինությունների առանձին հատվածներում), որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շինությունում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է սույն կետի 9. 1-9. 5-րդ ենթակետերով սահմանված դրույքաչափով:

12) Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հարյուր Հայաստանի Հանրապետության դրամ:

13) Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, կենցաղային ծառայությունների մատուցման վայրերում, որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին:

14) Ոչ կենցաղային աղբի համար, ինչպես նաև ոչ բնակելի տարածքների վերաբերյալ սույն կետի 9. 1-9. 5-րդ ենթակետերով սահմանված դրույքաչափերի հետ անհամաձայնության դեպքում աղբահանության վճարը սահմանվում է՝

14.1ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ երեք հազար Հայաստանի Հանրապետության դրամ, կամ

14.2 ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ տասը հազար Հայաստանի Հանրապետության դրամ.

14.3) ոչ բնակելի նպատակային նշանակության շենքի և (կամ) շինության սեփականատերը անհամաձայնության մասին գրավոր ներկայացնում է համապատասխան համայնքի ղեկավարին կամ «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված անձանց՝ աղբահանության ծառայությունների մատուցման պայմանագիրը կնքելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

15). Սույն հոդվածի 2-րդ կետով սահմանված շենքերի, շինությունների և տարածքների մասով աղբի հեռացման հարաբերությունները կարգավորվում են աղբահանության ծառայություն մատուցող և ստացող կողմերի միջև կնքված պայմանագրով:

16) Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝ յուրաքանչյուր ընտանիքից հաճախող մեկ երեխայի համար՝ 5000 /հինգ հազար/ ՀՀ դրամ, երկրորդ երեխայի համար՝ 3000 /երեք հազար/ ՀՀ դրամ, երրորդ երեխայի համար՝ անվճար.

17) Հայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար՝ արվեստի դպրոց հաճախող մեկ երեխայի համար 4000 ՀՀ դրամ , իսկ ծնողազուրկ երեխաների և մեկ ընտանիքից հաճախող 2 և ավել երեխայի դեպքում՝ ամեն մեկ երեխայի հաշվարկով 3000 /երեք հազար/ ՀՀ դրամ, մարզադպրոց հաճախող մեկ երեխայի համար 1000 դրամ .

18) Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ հազար դրամ փոխհատուցման վճար.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, (0237)34441 metsamormeria@yandex.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
28 դեկտեմբերի 2020 թվականի N 30 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 50-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի յոթերորդ մասով, Մեծամոր համայնքի ղեյավարի 2020 թվականի նոյեմբերի 25-ի N 552 գրությունը ինչպես նաև համայնքի ղեկավարի առաջարկությունը համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 50-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանը հաջորդող օրը:

կողմ- 9 դեմ- 0 ձեռնպահ- 0

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
ԳԱԼՈՅԱՆ ՖԵԼԻՔՍ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՅԿ
ՂՈՒԼԻՋԱՆՅԱՆ ՄԱՍԻՍ
ՄԿՐՏՉՅԱՆ ԱՇՈՏ
ՄԱՒԼՅԱՆ ԿՈԼՅԱ
ՄԿՐՏՉՅԱՆ ՄՀԵՐ

Համայնքի ղեկավար՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի
ավագանու 2020 թվականի դեկտեմբերի
28-ի N 30 -Ն որոշման

2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Վարչական բյուջեի եկամտային մասում տեղական վճարներից՝ համայնքային ենթակայության մանկապարտեզների և արտադպրոցական դաստիարակության ծառայությունների դիմաց փոխհատուցվող գումարներից պակասացնել 18000,0 հազ. /տասնութ միլիոն/ ՀՀ դրամ:

Վարչական բյուջեի ծախսային մասում «Կրթություն» ծրագրի բաժին 09 խումբ 1 դաս 1 «Թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 4511 հոդվածից պակասացնել 8000,0 հազ, /ութ միլիոն/ ՀՀ դրամ, «Թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 4511 հոդվածից պակասացնել 4000,0 հազ, /չորս միլիոն/ ՀՀ դրամ, «Թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 4511 հոդվածից պակասացնել 7100,0 հազ, /յոթ միլիոն հարյուր հազար/ ՀՀ դրամ, ավելացնել «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» ծրագրի բաժին 01 խումբ1 դաս 1 4212 հոդվածին 100,0 հազ. /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ, «Սոցիալական պաշտպանություն» ծրագրի բաժին 10 խումբ 7 դաս 1 4729 հոդվածին 1000,0 հազ./մեկ միլիոն/ ՀՀ դրամ:

Ֆոնդային բյուջեի եկամտային մասում Մեծամոր համայնքի թիվ 35 շենքի տանիքի վերանորոգման աշխատանքների և համայնքի մի շարք փողոցների ասֆալտապատման աշխատանքների սուբվենցիոն ծրագրերի համաֆինանսավորման *համար նախատեսել 18094,7 հազ. /տասնութ միլիոն իննսունչորս հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ կապիտալ սուբվենցիա:*

Ֆոնդային բյուջեի ծախսային մասում «Բնակարանային շինարարություն» ծրագրի բաժին 06 խումբ1 դաս1 5113 հոդվածին ավելացնել 8 604,2 հազ. /ութ միլիոն վեց հարյուր չորս հազար երկու հարյուր/ ՀՀ դրամ, «Տրանսպորտ» ծրագրի բաժին 04 խումբ 5 դաս 1 5113 հոդվածին ավելացնել 9490,5 հազ. /ինը միլիոն չորս հարյուր իննսուն հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ:

Աշխատակազմի քարտուղար՝ Ն. Թադևոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, (0237)34441 metsamormeria@yandex.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 դեկտեմբերի 2020 թվականի N 31-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 20-րդ կետով «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի 2021 թվականի աղբահանության և սանիտարական մաքրման սխեման համաձայն հավելածի:
2. Աղբահանության վճար վճարողների հաշվառումը, ինչպես նաև վճարի գանձումը վերապահել «Մեծամորի բարեկարգում» ՀՈԱԿ-ին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

կողմ- 9 դեմ- 0 ձեռնպահ-0

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՎՈՒԼՈԴՅԱ
ԳԱԼՈՅԱՆ ՖԵԼԻՔՍ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՅԿ
ՂՈՒԼԻՋԱՆՅԱՆ ՄԱՍԻՍ
ՄԱՀԼՅԱՆ ԿՈԼՅԱ
ՄԿՐՏՉՅԱՆ ԱՇՈՏ
ՄԿՐՏՉՅԱՆ ՄՀԵՐ

Համայնքի ղեկավար՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N1

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Մեծամոր համայնքի ավագանու
2020 թվականի դեկտեմբերի 28-ի
N 31-Ա որոշման

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱ

1. Համայնքում աղբաթափվող տարածքները

ա/ Փողոցների մաքրում
բ/ Բնակելի շենքերի հարակից տարածքների մաքրում
գ/ Անտառաշերտի մաքրում
դ/ Բնակելի շենքերի կենցաղային աղբի աղբահանում
ե/ Բարձրահարկ շենքերի աղբարկղերի աղբահանում
զ/ Ցածրահարկ շենքերից աղբահանում
է/ Գերեզմանատան տարածքի աղբահանում
ը/ Սեփական օբյեկտների տարածքի մաքրում
թ/ Ուսումնական հաստատությունների տարածքների մաքրում

2. Համայնքում սանիտարական մաքրման ենթակա տարածքը կազմում է 29.2 հա, աղբաթափման աշխատանքներն իրականացվում են օրական 3-4 անգամ GAZ 53 մակնիշի աղբաթափող մեքենայով: Համայնքում ամսական հավաքվող աղբի ծավալը մոտավոր հաշվարկներով կազմում է տարեկան 7560 $մ^3$: Հավաքված աղբը տեղափոխվում է Արմավիրի մարզի Մայիսյան համայնքի վարչական տարածքում գտնվող աղբաթափման վայր:

3. Համայնքում տեղադրված աղբամանները

հ/հ	Աղբամանների տեղադրման վայրը	Տեսակը	Քանակը
1	4-րդ թաղամաս	մետաղյա	6
2	հիվանդանոցի մոտ	մետաղյա	3
3	2-րդ թղմ, թիվ 2-րդ դպրոց	մետաղյա	1
4	2-րդ թղմ մանկապարտեզի մոտ	մետաղյա	3
5	2-րդ թղմ $1^{բ}$ շենքի մոտ	մետաղյա	2
6	2-րդ թղմ $2^{բ}$ շենքի մոտ	մետաղյա	2
7	2-րդ թղմ $3^{բ}$ շենքի մոտ	մետաղյա	2
8	1-ին թղմ $2^{բ}$ շենքի մոտ	մետաղյա	2
9	1-ին թղմ $4^{բ1}$ շենքի մոտ	մետաղյա	4
10	1-ին թղմ $4^{բ2}$ շենքի մոտ	մետաղյա	7
11	դեղատուն «Նարեկ»	մետաղյա	6
12	քաղաքապետարանի շենքի դիմաց	մետաղյա	3
13	հյուրանոցի մոտ	մետաղյա	2
14	$6^{բ2}$ շենքի մոտ	մետաղյա	6
15	$6^{բ1}$ շենքի մոտ	մետաղյա	2
16	$8^{բ1}$ շենքի մոտ	մետաղյա	5
17	$8^{բ2}$ շենքի մոտ	մետաղյա	5
18	25 շենքի դիմաց	մետաղյա	4
19	շուկայի տարածքում	մետաղյա	9
20	թիվ 1 դպրոցի մոտ	մետաղյա	4
21	27 շենքի դիմաց	մետաղյա	5
22	գազալցակայանի մոտ	մետաղյա	1
23	33-34 շենքերի դիմաց	մետաղյա	4
24	ժամանակավոր տնակներ	մետաղյա	9
25	վանքի հարակից տարածք, 2-րդ թղմ	մետաղյա	5
26	32 շենքի դիմաց	մետաղյա	3

28	3Բ1 և 3Բ2 շենքերի մոտ	մետաղյա	9
29	Գերեզմանատան տարածք	մետաղյա	2
30	3-րդ թաղամաս ջրամբարի մոտ	մետաղյա	3
31	6Բ2 շենքի դիմաց՝ ճանապարհին	մետաղյա	3
32	1թղմ 36-5 տան դիմաց	մետաղյա	2

Աշխատակազմի քարտուղար՝ Ն. Թադևոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, (0237)34441 metsamormeria@yandex.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 դեկտեմբերի 2020 թվականի N 32-Ա

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻ, ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Մեծամոր համայնքի «Թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի, «Թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի, «Թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի, «Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿԻ, «Մեծամորի մարզադպրոց» ՀՈԱԿ-ի, և Մեծամորի համայնքապետարանի մշակույթի տան խմբակների 2021 թվականի գործունեությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

կողմ- 9 դեմ- 0 ձեռնպահ- 0

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
ԳԱԼՈՅԱՆ ՖԵԼԻՔՍ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՅԿ
ՂՈՒԼԻՋԱՆՅԱՆ ՄԱՍԻՍ
ՄԱՒԼՅԱՆ ԿՈԼՅԱ
ՄԿՐՏՉՅԱՆ ԱՇՈՏ
ՄԿՐՏՉՅԱՆ ՄՀԵՐ

Համայնքի ղեկավար՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի մեծամոր համայնքի ավագանու
2020 թվականի դեկտեմբերի 28-ի
N 32-Ա որոշման

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻ, ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1. Մեծամոր համայնքի «Թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ /տնօրեն Լ.Աբրահամյան/՝ կոմպլեկտավորել մանկապարտեզում 5 խումբ որից՝

ա) կրտսեր նախադպրոցական տարիք՝ 4 խումբ, յուրաքանչյուր խմբում- 30 երեխա
բ) ավագ նախադպրոցական տարիք՝ 1 խումբ, յուրաքանչյուր խմբում- 30 երեխա

Մեծամոր համայնքի «Թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ /տնօրենի ժ/պ՝ Ա. Բաբայան/, կոմպլեկտավորել մանկապարտեզում 4 խումբ որից՝

ա) կրտսեր նախադպրոցական տարիք՝ 2 խումբ
որից 1-ին խումբ -25 երեխա, 2-րդ խումբ -30 երեխա
բ) ավագ նախադպրոցական տարիք՝ 1 խումբ- 30 երեխա
գ) հաշմանդամ երեխաների՝ 1 խումբ

Մեծամոր համայնքի «Թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ /տնօրեն՝ Գ. Հակոբյան/ կոմպլեկտավորել մանկապարտեզում 5 խումբ որից՝

ա) վաղ նախադպրոցական տարիք՝ 1 խումբ, յուրաքանչյուր խմբում- 20 երեխա
բ) կրտսեր նախադպրոցական տարիք՝ 2 խումբ, յուրաքանչյուր խմբում- 30 երեխա
գ) ավագ նախադպրոցական տարիք՝ 2 խումբ, յուրաքանչյուր խմբում- 30 երեխա

2. «Թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ /տնօրեն՝ Լ.Աբրահամյան/, «Թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ /տնօրենի ժ/պ՝ Ա. Բաբայան/, «Թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ /տնօրեն՝ Գ. Հակոբյան/՝, աշխատանքային գործուեությունը սահմանել 8 ժամյա, հաճախող երեխաների մեկ օրվա սննդի նորման մեկ երեխայի հաշվարկով սահմանել 300 /երեք հարյուր/ ՀՀ դրամ, իսկ պահպանման վարձը՝ յուրաքանչյուր ընտանիքից հաճախող մեկ երեխայի համար՝ 5000 /հինգ հազար/ ՀՀ դրամ, երկրորդ երեխայի համար՝ 3000 /երեք հազար/ ՀՀ դրամ, երրորդ երեխայի համար՝ անվճար:

Արմավիրի մարզի գյուղական համայնքներից Մեծամոր համայնքի մանկապարտեզներ հաճախող երեխաների դեպքում պահպանման վարձը մեկ երեխայի համար սահմանել 12000 /տասներկու հազար/ ՀՀ դրամ

2021 թվականի ընթացքում մանկապարտեզների խմբերի գործուեությունը սահմանել 7 ամիս և 2 ամիս՝ կրճատ խմբերով:

3. «Թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ /տնօրեն՝ Լ.Աբրահամյան/, «Թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ /տնօրենի ժ/պ՝ Ա. Բաբայան/, «Թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ /տնօրեն՝ Գ. Հակոբյան/՝ առաջնահերթության կարգով մանկապարտեզ ընդունել այն երեխաներին, որոնց ծնողներն աշխատում են:

4. «Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ հաճախող երեխաների ուսման վարձը ամսական սահմանել 4000 /չորս հազար/ ՀՀ դրամ, իսկ ծնողազուրկ երեխաների և մեկ ընտանիքից հաճախող 2 և ավել երեխայի դեպքում՝ ամեն մեկ երեխայի հաշվարկով 3000 /երեք հազար/ ՀՀ դրամ:

«Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ում սովորողների թիվը սահմանել մինչև 200 երեխա:

«Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի երաժիշտ դասատուների և «Մեծամորի մարզադպրոց» ՀՈԱԿ-ի մարզիչների համար 1 դրույքը սահմանել շաբաթական 24 ժամ, իսկ պարապմունքների ժամկետը սահմանե լ 10 ամիս՝ 2021 թվականի հունվարի 1-ից:

5. «Մեծամորի մարզադպրոց» ՀՈԱԿ հաճախող երեխաների ուսման վարձը ամսական մեկ երեխայի հաշվարկով սահմանել 1000 /հազար/ ՀՀ դրամ, իսկ հաճախումների թիվը սահմանել 80 երեխա:

6. Մեծամորի համայնքապետարանի մշակույթի տան պարի և կերպարվեստի խմբակ հաճախող երեխաների թիվը յուրաքանչյուր խմբում սահմանել 18-36 երեխա, իսկ յուրաքանչյուր ամսվա համար ուսման վարձը՝ 3000 /երեք հազար/ ՀՀ դրամ.

Վոկալի և թատերական խմբակ հաճախող երեխաների թիվը յուրաքանչյուր խմբում սահմանել 18-36 երեխա, իսկ յուրաքանչյուր ամսվա համար ուսման վարձը՝ 3000 /երեք հազար/ ՀՀ դրամ :

7. Երեխաների վարձավճարները գանձել անկախ ամսվա հաճախելիության օրերի թվից, բացառությամբ հիվանդության մասին բժշկի տեղեկանքի առկայության:

Հավաքագրված վարձավճարները յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա 5-րդ աշխատաքնային օրը մուտքագրել համայնքի բյուջե՝ համապատասխան հաշվեհամարին և համայնքապետարան ներկայացնել վճարման անդորագիրը:

8. «Թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ /տնօրեն՝ Լ.Աբրահամյան/, «Թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ /տնօրենի ժ/պ՝ Ա. Բաբայան/ , «Թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ, «Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ, «Մեծամորի մարզադպրոց» ՀՈԱԿ, մշակույթի տան խմբակներ հաճախող երեխաների ցուցակները յուրաքանչյուր ամսվա համար վճարված (կամ չվճարած) գումարի չափի նշումով մինչև հաջորդ ամսվա 10-ը ներկայացնել Մեծամորի համայնքապետարան:

9. «Թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում, «Թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում, «Թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում, «Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ում և «Մեծամորի մարզադպրոց» ՀՈԱԿ-ում մշակույթի տան խմբակներում սույն որոշմամբ հաստատված երեխաների թիվը չապահովելու կամ գերազանցելու դեպքում լիազորել Մեծամորի համայնքապետարանին՝ վերակոմպլեկտավորելու խմբերը և վերանայելու հաստիքացուցակները:

Աշխատակազմի քարտուղար՝ **Ն. Թադևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, (0237)34441 metsamormeria@yandex.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 դեկտեմբերի 2020 թվականի N 33 -Ա

2021 ԹՎԱԿԱՆԻՆ «ՄԵԾԱՄՈՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀՈԱԿ- Ի ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 28-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել 2021 թվականին Մեծամոր համայնքում աղբի վարձավճարների հավաքագրում իրականացնող «Մեծամորի բարեկարգում» ՀՈԱԿ –ի պայմանագրային աշխատողների քանակը հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Պաշտոնային դրույքաչափը յուրաքանչյուր հաստիքի համար սահմանել յուրաքանչյուր ամսվա ընթացքում փաստացի հավաքագրված աղբի վարձավճարների ընդհանուր գումարի նկատմամբ 18,3%-ի չափով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

կողմ-9 դեմ-0 ձեռնպահ-0

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ

ԳԱԼՈՅԱՆ ՖԵԼԻՔՍ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՅԿ

ՂՈՒԼԻՋԱՆՅԱՆ ՄԱՍԻՍ

ՄԱՒԼՅԱՆ ԿՈԼՅԱ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՇՈՏ

ՄԿՐՏՉՅԱՆ ՄՀԵՐ

Համայնքի ղեկավար՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ N 1
Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Մեծամոր համայնքի ավագանու
2020 թվականի դեկտեմբերի 28-ի
N 33-Ա որոշման

2021 ԹՎԱԿԱՆԻ «ՄԵԾԱՄՈՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀՈԱԿ –Ի՝ ԱՂԲԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների քանակը՝ 4

2.Հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը՝

հհ	պաշտոնը	հաստիքային միավոր	պաշտոնային դրույքաչափը ըստ փաստացի հավաքագրված գումարի՝ %
1	Հսկիչ	4	18,3 %
	Ընդամենը	4	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, (0237)34441 metsamormeria@yandex.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 դեկտեմբերի 2020 թվականի N 34-Ա

2021 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ, ՄԵԾԱՄՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 11-րդ և 28-րդ կետերով, և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. *Հաստատել 2021 թվականի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ղեկավարի, համայնքապետարանի աշխատակազմի, համայնքային ենթակայության հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների քանակը հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն NN 1,2,3,4,5,6,7,8,9 հավելվածների:*

2. *Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:*

կողմ-9 դեմ-0 ձեռնպահ-0

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՎՈՒՂԴՅԱ
ԳԱԼՈՅԱՆ ՖԵԼԻՔՍ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՅԿ
ՂՈՒԼԻՋԱՆՅԱՆ ՄԱՍԻՍ
ՄԱՒԼՅԱՆ ԿՈԼՅԱ
ՄԿՐՏՉՅԱՆ ԱՇՈՏ
ՄԿՐՏՉՅԱՆ ՄՀԵՐ

Համայնքի ղեկավար՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ N 1

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Մեծամոր համայնքի ավագանու
2020 թվականի դեկտեմբերի 28-ի
N 34 -Ա որոշման

2021 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԵԾԱՄՈՐԻ ՀԱՄԱՅԱՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների քանակը՝ 28
2.Հաստիքացուցակը , պաշտոնային դրույքաչափերը՝

հհ	պաշտոնը	հաստիքային միավոր	պաշտոնային դրույքաչափը
1	Համայնքի ղեկավար	1	354000
2	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	212000
3	Համայնքի ղեկավարի օգնական	1	122200
4	Համայնքի ղեկավարի օգնական /տնտեսական զարգացման հարցերով պատասխանատու/	1	122200
	Ընդամենը	4	

ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

3	Աշխատակազմի քարտուղար	1	191300
4	Ներքին աուդիտի բաժին պետ	1	142300
5	Աշխատակազմի գլխ.մասնագետ	3	135600
6	Աշխատակազմի առաջատար մասնագետ	8	122200
7	Աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ	3	108800
	Ընդամենը	16	

Տեխնիկական սպասարկման անձնակազմ

1	Տնտեսվար	1	95400
2	Վարորդ	3	112000
4	Համակարգչային ադմինիստրատոր	2	95400
5	Հավաքարար	1	95400
6	էլեկտրիկ	1	95400
	Ընդամենը	8	

ՀԱՎԵԼՎԱԾ N 2

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Մեծամոր համայնքի ավագանու
2020 թվականի դեկտեմբերի 28-ի
N 34-Ա որոշման

2021 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների քանակը՝ 6

2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

հհ	պաշտոնը	թվաքանակ	դրույքաչափ
1	տնօրեն	1	118500
2	ավագ գրադարանավար	1	95400
3	գրադարանավար	4	92618
	Ընդամենը	6	

ՀԱՎԵԼՎԱԾ N3

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Մեծամոր համայնքի ավագանու
2020 թվականի դեկտեմբերի 28-ի
N 34 -Ա որոշման

2021 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների քանակը՝ 14

2.Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

հհ	պաշտոնը	թվաքանակ	դրույքաչափ
1	տնօրեն	1	118500
2	գեղմասվար	1	95400
3	մեթոդիստ	1	95400
4	հաշվապահ	1	95400
5	հսկիչ	2	92618
6	հավաքարար	3	92618
7	պահակ	1	92618
8	խմբավար (2 x 0,5դրույք)	2	46309
9	խմբավար	2	92618
	Ընդամենը	14	

ՀԱՎԵԼՎԱԾ N

Հայաստանի Հանրապետության Արմավիր
մարզի Մեծամոր համայնքի ավագան
2020 թվականի դեկտեմբերի 28-
N 34 -Ա որոշմա

2021 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների քանակը՝ 31
2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

հհ	պաշտոնը	թվաքանակ	դրույքաչափ
1	տնօրեն	1	151500
2	մեթոդիստ	1	110000
3	բուժքույր	1	98800
4	հաշվապահ	1	95400
5	Գործավար (0,25 դրույք)	1	47700
6	տնտեսվար (0,5 դրույք)	1	53300
7	դաշնակահար (1.25 դրույք)	1	137500
8	Ֆիզկուլտուրայի հրահանգիչ	1	110000
9	պարուսույց (0,75 դրույք)	1	82500
10	դաստիարակ (0,56 դրույք)	10	61600
11	դաստիարակի օգնական	5	95400
12	խոհարար	1	95400
13	խոհարարի օգնական	1	95400
14	դռնապահ	1	92618
15	լվացարար (0,25 դրույք)	1	23850
16	օժանդակ բանվոր(0,5 դրույք)	1	47700
17	դերձակ (0,25 դրույք)	1	23850
18	հավաքարար (0,5 դրույք)	1	47700
	ԸՆԴԱՄԵՆԸ	31	

3. Մանկավարժական կադրերի որակավորման տարակարգերի չափանիշներ

1-ին կարգ՝ բարձրագույն կրթություն և 15 տարուց ավել մանկավարժական ստաժի դեպքում 1 դրույքը սահմանել 112300 /հարյուր տասներկու հազար երեք հարյուր / ՀՀ դրամ

2-րդ կարգ՝ բարձրագույն կրթության և 1-15 տարվա մանկավարժական աշխատանքային ստաժի կամ միջնակարգ մասնագիտական կրթության և 15 տարուց ավել մանկավարժական աշխատանքային ստաժի դեպքում 1 դրույքը սահմանել 111200 / հարյուր տասնմեկ հազար երկու հարյուր /ՀՀ դրամ

3-րդ կարգ՝ բարձրագույն կրթության և մինչև 1 տարվա մանկավարժական աշխատանքային ստաժի կամ միջնակարգ մասնագիտական կրթության և մինչև 15 տարվա մանկավարժական աշխատանքային ստաժի դեպքում 1 դրույքը սահմանել 110000 /հարյուր տաս հազար/ ՀՀ դրամ:

ՀԱՎԵԼՎԱԾ N5

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Մեծամոր համայնքի ավագանու
2020 թվականի դեկտեմբերի 28-ի
N 34 -Ա որոշման

2021 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ԹԻՎ 2 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների քանակը՝ 26

2.Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

հհ	պաշտոնը	թվաքանակ	դրույքաչափ
1	տնօրեն	1	151500
2	մեթոդիստ (0,5 դրույք)	1	55000
3	բուժքույր (0,75 դրույք)	1	74100
4	հաշվապահ (0,5 դրույք)	1	47700
5	տնտեսվար (0,5 դրույք)	1	53300
6	դաշնակահար (0,75 դրույք)	1	82500
7	Ֆիզկուլտուրայի հրահանգիչ (0,5 դրույք)	1	55000
8	պարուսույց (0,5 դրույք)	1	55000
9	հոգեբան (0,58 դրույք)	1	66000
10	դաստիարակ (0,56 դրույք)	7	61600
11	դաստիարակի օգնական	3	95400
12	խոհարար	1	95400
13	Խոհարարի օգնական (0,5 դրույք)	1	47700
14	հավաքարար (0,5 դրույք)	1	47700
15	լվացարար (0,25 դրույք)	1	23850
16	դռնապահ	1	92618
17	օժանդակ բանվոր(0,5 դրույք)	1	47700
18	դերձակ (0,25 դրույք)	1	23850
	ԸՆԴԱՄԵՆԸ	26	

Մանկավարժական կադրերի որակավորման տարակարգերի չափանիշներ

1-ին կարգ՝ բարձրագույն կրթություն և 15 տարուց ավել մանկավարժական ստաժի դեպքում 1 դրույքը սահմանել 112300 /հարյուր տասներկու հազար երեք հարյուր / ՀՀ դրամ

2-րդ կարգ՝ բարձրագույն կրթության և 1-15 տարվա մանկավարժական աշխատանքային ստաժի կամ միջնակարգ մասնագիտական կրթության և 15 տարուց ավել մանկավարժական աշխատանքային ստաժի դեպքում 1 դրույքը սահմանել 111200 / հարյուր տասնմեկ հազար երկու հարյուր /ՀՀ դրամ

3-րդ կարգ՝ բարձրագույն կրթության և մինչև 1 տարվա մանկավարժական աշխատանքային ստաժի կամ միջնակարգ մասնագիտական կրթության և մինչև 15 տարվա մանկավարժական աշխատանքային ստաժի դեպքում 1 դրույքը սահմանել 110000 /հարյուր տաս հազար/ ՀՀ դրամ:

ՀԱՎԵԼՎԱԾ N6

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Մեծամոր համայնքի ավագանու
2020 թվականի դեկտեմբերի 28-ի
N 34 -Ա որոշման

2021 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ԹԻՎ 3 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների քանակը՝ 31
2.Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

հ/հ	պաշտոնը	թվաքանակ	դրույքաչափ
1	տնօրեն	1	151500
2	մեթոդիստ	1	110000
3	բուժքույր	1	98800
4	հաշվապահ	1	95400
5	տնտեսվար (0,5 դրույք)	1	53300
6	գործավար (0,25 դրույք)	1	47700
7	դաշնակահար (1.25 դրույք)	1	137500
8	Ֆիզկուլտուրայի հրահանգիչ (0,75 դրույք)	1	82500
9	պարուսույց (0,75 դրույք)	1	82500
10	դաստիարակ (0,7 դրույք)	5	77000
11	դաստիարակ (0,42 դրույք)	5	46200
12	դաստիարակի օգնական	5	95400
13	խոհարար	1	95400
14	խոհարարի օգնական	1	95400
15	լվացարար (0,25 դրույք)	1	23850
16	դռնապահ	1	92618
17	դերձակ (0,25 դրույք)	1	23850
18	հավաքարար (0,5 դրույք)	1	47700
19	օժանդակ բանվոր (0,5 դրույք)	1	47700
	ԸՆԴԱՄԵՆԸ	31	

Մանկավարժական կադրերի որակավորման տարակարգերի չափանիշներ

1-ին կարգ՝ բարձրագույն կրթություն և 15 տարուց ավել մանկավարժական ստաժի դեպքում 1 դրույքը սահմանել 112300 /հարյուր տասներկու հազար երեք հարյուր / ՀՀ դրամ

2-րդ կարգ՝ բարձրագույն կրթության և 1-15 տարվա մանկավարժական աշխատանքային ստաժի կամ միջնակարգ մասնագիտական կրթության և 15 տարուց ավել մանկավարժական աշխատանքային ստաժի դեպքում 1 դրույքը սահմանել 111200 / հարյուր տասնմեկ հազար երկու հարյուր /ՀՀ դրամ

3-րդ կարգ՝ բարձրագույն կրթության և մինչև 1 տարվա մանկավարժական աշխատանքային ստաժի կամ միջնակարգ մասնագիտական կրթության և մինչև 15 տարվա մանկավարժական աշխատանքային ստաժի դեպքում 1 դրույքը սահմանել 110000 /հարյուր տաս հազար/ ՀՀ դրամ:

ՀԱՎԵԼՎԱԾ N7

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Մեծամոր համայնքի ավագանու
2020 թվականի դեկտեմբերի 28-ի
N 34 -Ա որոշման

2021 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԵԾԱՄՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ՇԱՈՒ ԱԶՆԱՎՈՒՐԻ ԱՆՎԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների քանակը՝ 25

2.Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ե

հ/հ	պաշտոնը	թվաքանակ	դրույքաչափը
1	տնօրեն	1	131200
2	ուսմասվար	1	105200
3	հաշվապահ	1	95400
4	դաշնամուրի դասատու	5	95400
5	ջութակի դասատու	1	95400
6	դուդուկի-շվիի դասատու	1	95400
7	քանոնի-թառի դասատու	1	95400
8	դհոլի դասատու	2	95400
9	վոկալի դասատու	1	95400
10	Սոլֆեջո գրականության դասատու	1	95400
11	երգչախումբ-սոլֆեջոի դասատու	1	95400
12	կերպարվեստի դասատու	2	95400
13	պարի դասատու	1	95400
14	գործավար	1	95400
15	տնտեսվար	1	95400
16	հավաքարար	2	95400
17	պահակ	2	95400
	ԸՆԴԱՄԵՆԸ	25	

ՀԱՎԵԼՎԱԾ N 8

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ավագանու
2020 թվականի դեկտեմբերի 28-ի
N 34 -Ա որոշման

2021 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ՄԵԾԱՄՈՐԻ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների քանակը՝ 18

2.Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

hh	պաշտոնը	թվաքանակ	դրույքաչափ
1	տնօրեն	1	131200
2	ուսմասվար	1	105200
3	մեթոդիստ	1	95400
4	հաշվապահ	1	95400
5	բուժ.քույր	1	95400
6	գործավար	1	95400
7	մարզիչ ֆ/բ	3	95400
8	մարզիչ թեթև ատլետիկայի	1	95400
9	մարզիչ ծանրամարտի	1	95400
10	մարզիչ բասկետբոլի	1	95400
11	մարզիչ հունա-հռոմեական ըմբշամարտ	1	95400
12	մարզիչ հունա-հռոմեական ըմբշամարտ	1	95400
13	հանդերձապահ	1	95400
14	հավաքարար	1	95400
15	տնտեսվար	1	95400
16	բանվոր	1	95400
	Ընդամենը	18	

ՀԱՎԵԼՎԱԾ N 9

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Մեծամոր համայնքի ավագանու
2020 թվականի դեկտեմբերի 28-ի
N 34 -Ա որոշման

2021 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ՄԵԾԱՄՈՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների քանակը՝ 82
2.Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հ/Հ.	պաշտոնը	թվաքանակ	դրույքաչափ
1	տնօրեն	1	184000
2	գլխ.ճարտարագետ	1	158000
3	կ/բ. մասնագետ	1	95400
4	գործավար	1	95400
5	օպերատոր	1	95400
6	պահեստապետ	1	95400
	ԸՆԴԱՄԵՆԸ	6	
	ՀԱՇՎԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ		
1	գլխավոր հաշվապահ	1	112000
2	հաշվապահ	1	95400
3	հաշվետար	2	95400
4	գանձապահ	1	95400
	ԸՆԴԱՄԵՆԸ	5	
	ԲՇՏ		
1	պետ	1	95400
2	տեխնիկ	1	95400
	ԸՆԴԱՄԵՆԸ	2	
	ՍԱՆՄԱՔՐՄԱՆ ՏԵՂԱՄԱՍ		
1	պետ	1	105200
2	բակի հավաքարար	16	100700
3	հավաքարար	1	95400
4	աղբաթափման բանվոր	4	102100
5	վարորդ	2	137800
	ԸՆԴԱՄԵՆԸ	24	

	ՇԻՆՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՏԵՂԱՄԱՍ		
1	պետ	1	112000
2	մեխանիկ	1	103000
3	էլ.եռակցող	1	95400
4	փականագործ	4	95400
5	էլեկտրիկ	1	95400
6	բանվոր-որմնադիր	1	95400
7	բանվոր -ներկարար	1	95400
8	բանվոր	2	95400
9	թիթեղագործ	1	95400
10	տրակտորավար	1	95400
11	վարորդ	1	95400
12	պահակ գերեզմանատան	1	95400
13	պահակ ցերեկային	1	95400
14	ջրամբարի պահակ (ցերեկային)	2	92618
	ԸՆԴԱՄԵՆԸ	19	
	ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ՏԵՂԱՄԱՍ		
1	պետ	1	105200
2	գյուղատնտես	1	95400
3	բանվոր	7	95400
	ԸՆԴԱՄԵՆԸ	9	
	ՀՅՈՒՐԱՆՈՑԱՍՈՂՋԱՐԱՆԱՅԻՆ ԲԱԺԻՆ		
1	պետ	1	105200
2	ավագ ադմինիստրատոր	3	95400
3	ադմինիստրատոր	4	95400
4	տնտեսվար	1	95400
5	մեթոդիստ	1	95400
6	հավաքարար	5	95400
7	պահակ	2	95400
	ԸՆԴԱՄԵՆԸ	17	
	ԸՆԴՀԱՆՈՒՐԸ	84	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, (0237)34441 metsamormeria@yandex.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 դեկտեմբերի 2020 թվականի N 35 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետությարենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածով 33-րդ հոդվածի երրորդ մասով և հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի յոթերորդ մասը, Մեծամոր համայնքի ղեկավարի 2020 թվականի նոյեմբերի 25-ի N 560 գրությունը, ինչպես նաև համայնքի ղեկավարի առաջարկությունը համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի 2021 թվականի բյուջեն՝ եկամուտների գծով՝ 369 420, 0 հազ. /երեք հարյուր վաթսունինը միլիոն չորս հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ, ծախսերի գծով ՝ 369 420, 0 հազ. /երեք հարյուր վաթսունինը միլիոն չորս հարյուր քսան հազար/
2. ՀՀ դրամ:
3. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտներն ըստ առանձին եկամտատեսակների համաձայն հատված 1-ի:
4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման համաձայն հատված 2-ի:
5. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման համաձայն հատված 3-ի:
6. Հաստատել համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտ /պակասուրդը/ համաձայն հատված 4-ի:

7. Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ համաձայն հատված 5-ի:

8. Հատատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական և գործառնական դասակարգման՝ համաձայն հատված 6-ի:

9. Թուլատրել համայնքի ղեկավարին բյուջեի կատարման ընթացքում կատարել վերաբաշխումներ ըստ տնտեսագիտական և գործառնական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև:

10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանը հաջորդող օրը:

կողմ-9 դեմ-0 ձեռնպահ-0.

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՎՈՒՂԴՅԱ

ԳԱԼՈՅԱՆ ՖԵԼԻՔՍ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՅԿ

ՂՈՒԼԻՋԱՆՅԱՆ ՄԱՍԻՍ

ՄԱԻԼՅԱՆ ԿՈԼՅԱ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՇՈՏ

ՄԿՐՏՉՅԱՆ ՄՀԵՐ

Համայնքի ղեկավար՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ